[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
9	Օգոստոս	2018 թ.		Բ	8192807287
[4] Առաքման ամսաթիվ					
9	Օգոստոս	2018 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Լիազորագիր: Ամսաթիվ
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկ	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 55152518 բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

09/08/2018 15:27:55

ՈՐՈՇՈՒՄ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

31 մայիսի 2018թ.

ք.Ալավերդի

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Ս. Մնացականյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 55152518 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Էմմա Դավիթավյանի, Արմանուշ Մայիլյանի և Սամվել Աբգարյանի հաղորդումների վերաբերյալ նյութերի նախապատրաստման ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ 2018 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 00.05-ի սահմաններում, Համլետ Ասլանյանը, հորեղբոր աղջկա՝ Արփինե Ասլանյանի առաջարկով և նրա հետ նախնական համաձայնության գալով, օգտվելով տան տերերի՝ առանձնատան երկրորդ հարկում քնած լինելու և առանձնատան առաջին հարկում գտնվող նկուղի դուռը չկողպված լինելու հանգամանքից, բացելով դուռը, ապօրինի մուտք են գործել Ալավերդի քաղաքի Երիտասարդական 16 հասցեում գտնվող, Արմանուշ Մայիլյանին պատկանող առանձնատան առաջին հարկում գտնվող, որպես շինություն հանդիսացող նկուղ և այնտեղից գաղտնի հափշտակել 23 լիտր տարողությամբ ապակե տարա՝ տնական պայմաններում պատրաստված շուրջ 20 լիտր գինու պարունակությամբ, և մեկ զույգ կիսաճտքավոր կոշիկներ՝ Արմանուշ Մայիլյանին պատճառելով, զգալի չափերի հասնող՝ շուրջ 50.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ գույքային վնաս:

2018 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 01.00-ի սահմաններում, Համլետ Ասլանյանը, հորեղբոր աղջկա՝ Արփինե Ասլանյանի առաջարկով և նրա հետ նախնական համաձայնության գալով, քանդելով մուտքի դռան փականի վրայի մետաղյա լարը և բացելով Ալավերդի քաղաքի Երիտասարդական 10 հասցեում գտնվող, Էմմա Դավիթավյանին պատկանող առանձնատան մուտքի դուռը, ապօրինի մուտք են գործել առանձնատուն, հյուրասենյակում դրված պահարանի վրայից և դարակներից գաղտնի հափշտակել էլեկտրական հոսանքի կարգավորիչ, էլեկտրական լապտեր, խոհանոցային մետաղյա տարաների հավաքածու և մեծ ջերմաչափ՝ Էմմա Դավիթավյանին պատճառելով, զգալի չափերի հասնող՝ շուրջ 40.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ գույքային վնաս:

2018 թվականի փետրվարի 21-ին՝ ժամը 22.00-ի սահմաններում, Համլետ Ասլանյանը, իր ծանոթ Աշոտ Լալայանի առաջարկով և նրա հետ նախնական համաձայնության գալով, գնացել են Ալավերդի քաղաքի Երիտասարդական 1 հասցեում գտնվող, Ռազմիկ Աբգարյանին պատկանող և նրա կողմից իր եղբորորդի Սամվել Աբգարյանի վստահությանը հանձնված առանձնատան մոտ, որտեղ Աշոտ Լալայանը հսկել է տարածքը, իսկ Համլետ Ասլանյանը, օգտվելով առանձնատան երկրորդ հարկի պատշգամբի մուտքի դռան չկողպված լինելու հանգամանքից, բարձրանալով պատշգամբ՝ բացել է այն, ապօրինի մուտք գործել առանձնատուն, և տարբեր սենյակներում գտնվող պահարաններից գաղտնի հափշտակել՝ զարդեր (բիժուտերիա) և որսորդական հրացանից կրակվելու համար նախատեսված թվով 2 հատ փամփուշտներ:

2018 թվականի փետրվարի 23-ին՝ ժամը 03.00-ի սահմաններում, Համլետ Ասլանյանը, հորեղբոր աղջկա՝ Արփինե Ասլանյանի առաջարկով և նրա հետ նախնական համա-

ձայնության գալով, գնացել են Ալավերդի քաղաքի Երիտասարդական 1 հասցեում գտնվող, Ռազմիկ Աբգարյանին պատկանող և նրա կողմից իր եղբորորդի Սամվել Աբգարյանի վստահությանը հանձնված առանձնատան մոտ, որտեղ Համլետ Ասլանյանը, օգտվելով առանձնատան երկրորդ հարկի պատշգամբի մուտքի դռան չկողպված լինելու հանգամանքից, բարձրանալով պատշգամբ՝ բացել է այն, ապօրինի մուտք գործել առանձնատուն, ներսից բացել առանձնատան երկրորդ հարկի մուտքի դուռը, որտեղից Արփինե Ասլանյանը նույնպես ապօրինի մուտք է գործել տուն, այնուհետև միասին տարբեր սենյակներից գաղտնի հափշտակել են «LG» ապրանքանիշի դրյուրակիր հեռուստացույց, կանացի կոշիկներ, կանացի պայուսակներ, կոսմետիկական պարագաներ և Սամվել Աբգարյանի կողմից ապօրինի պահած 882523 գործարանային համարի, «ՄՑ 21-12» մոդելի 12 տրամաչափի հրազեն հանդիսացող հրացանը:

2018 թվականի փետրվարի 23-ին՝ ժամը 05.00-ի սահմաններում, Համլետ Ասլանյանը, հորեղբոր աղջկա՝ Արփինե Ասլանյանի առաջարկով, գնացել է Ալավերդի քաղաքի Երիտասարդական 1 հասցեում գտնվող, Ռազմիկ Աբգարյանին պատկանող և նրա կողմից իր եղբորորդի Սամվել Աբգարյանի վստահությանը հանձնված առանձնատան մոտ, օգտվելով առանձնատան երկրորդ հարկի պատշգամբի մուտքի դռան չկողպված լինելու հանգամանքից, բարձրանալով պատշգամբ՝ բացել է այն, ապօրինի մուտք գործել առանձնատուն, ննջասենյակի ներփորովի բաց պահարանից գաղտնի հափշտակել «SHARP» ապրանքանիշի հեռուստացույց:

Արդյունքում Ռազմիկ Աբգարյանին պատճառվել է, զգալի չափերի հասնող՝ շուրջ 500.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ գույքային վնաս:

Դեպքի առթիվ 2018 թվականի մարտի 08-ին ոստիկանության Թումանյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերի, 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի, 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1-րդ կետի՝ 4 դրվագ և 238-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 55152518 քրեական գործը:

Բացի այդ, 2018 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 16.10-ին, ՀՀ ԱԻՆ ԼՄՓՎ ՃԿԿ-ից ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն, այնուհետև ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյանի բաժին ստացված հաղորդման կապակցությամբ նյութերի նախապատրաստման ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Արփինե Ասլանյանը, 2018 թվականի փետրվարի 24-ին՝ ժամը 14.00-ի սահմաններում, օգտվելով մուտքի դուռը բաց լինելու հանգամանքից, իր և Համլետ Ասլանյանի կողմից 2018 թվականի փետրվարի 22-ին՝ ժամը 01.00-ի սահմաններում, Վարշամ Դավիթավյանին պատկանող Ալավերդի քաղաքի Երիտասարդական փողոցի 10-րդ հասցեի առանձնատնից կատարված գողության հետքերը վերացնելու համար, ուրիշի գույքը հրկիզման եղանակով դիտավորությամբ ոչնչացնելու նպատակով, նախապես իր հետ պոլիմերային տարայով վերցված բենզինով և լուցկիով հրկիզել է Վարշամ Դավիթավյանին պատկանող առանձնատունը՝ վերջինիս պատճառելով, զգալի չափերի՝ շուրջ 250.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ գույքային վնաս:

Դեպքի առթիվ 2018 թվականի մարտի 08-ին ոստիկանության Թումանյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 55152418 քրեական գործը, որը նույն ամսվա 14-ին ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում:

2018 թվականի մարտի 15-ին որոշում է կայացվել թիվ 55152418 քրեական գործը թիվ 55152518 քրեական գործին միացնելու մասին և նախաքննությունը շարունակվել է թիվ 55152518 համարով:

2018 թվականի մայիսի 31-ին Աշոտ Լալայանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով՝ այն բանի համար, որ նա բարեկամին՝ Ալավերդի խոշորացված համայնքի Աքորի գյուղի բնակիչ Համլետ Ասլանյանին նույն համայնքի Երիտասարդական 1 հասցեում գտնվող, Ռազմիկ Աբգարյանին պատկանող առանձնատան բնակեցված չլինելու մասին տրամադրել է տեղեկատվություն և վերջինիս հետ ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով՝ 2018 թվականի փետրվարի 21-ին՝ ժամը 22-ի սահմաններում, գնացել են հիշյալ առանձնատան մոտ, որտեղ, կատարած դերաբաշխման համաձայն, նա, այլ անձանց հայտնվելու դեպքում այդ մասին տեղեկացնելու նպատակով դարանակալել է բակում՝ այդ կերպ օժանդակելով Համլետ Ասլանյանի կողմից կատարվող հանցագործությանը, իսկ Համլետ Ասլանյանը, օգտվելով առանձնատան մուտքի դռան կողպված չլինելու հանգամանքից, ապօրինի մուտք է գործել հիշյալ առանձնատուն և գաղտնի հափշտակել Ռազմիկ Աբգարյանի կնոջ՝ Աստղիկ Աբգարյանին պատկանող, զգալի չափերով՝ շուրջ 260.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողության կանացի զարդերը:

Նույն օրը Աշոտ Լալայանի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել ստորագրություն չհեռանալու մասին:

Առաջադրված մեղադրանքում Աշոտ Լալայանն իրեն մեղավոր չի ճանաչել և հայտնել, որ չի հիշում, թե ինչ է կատարվել:

Քրեական գործի նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ Աշոտ Լալայանը 2016 թվականի սեպտեմբեր կամ հոկտեմբեր ամսին իրեն հատկացված «Դիազեպամ» տեսակի հոգեմետ դեղից 10 դեղահաբը տվել է Համլետ Ասլանյանին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Աշոտ Լալայանը 02.03.2007 թվականից «Շիզոֆրենիա, պարանոիդ ձև» ախտորոշմամբ հաշվառված է «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության նյարդահոգեբուժական կաբինետում:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Աշոտ Լալայանի հոգեկան վիճակի, նրա մոտ հոգեկան հիվանդության առկայության, մեղսունակության հարցը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-244 և 248 հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲ ընկերության փորձագետներին:

2. Փորձաքննության ներկայացնել սույն որոշման օրինակը, իսկ քրեական գործի նյութերը և Աշոտ Լալայանը կներկայացվեն փորձաքննության անցկացման օրը:

3. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Աշոտ Լալայանը քրոնիկ հոգեկան կամ այլ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո ապա ինչպիսի:

բ/ Եթե Աշոտ Լալայանը տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ ունեցել է հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, ապա վերոհիշյալ դեպքի, ինչպես

նաև հոգեմետ դեղահաբերը Համլետ Ասլանյանին տալու պահին դրանք զրկել են նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակություններից, թե ոչ:

գ/ Վերոհիշյալ դեպքերի պահին Աշոտ Լալայանը ունեցել է արդյոք հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, թե ոչ:

դ/ Վերոհիշյալ դեպքերի պահին Աշոտ Լալայանը եղել է արդյոք մեղսունակ, թե ոչ, նա հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ:

ե/ Կարելի է արդյոք արժանահավատ համարել Աշոտ Լալայանի կողմից տրված ցուցմունքները:

զ/ Իր հոգեկան վիճակով պայմանավորված՝ Աշոտ Լալայանն ի վիճակի է մասնակցել դատաքննչական գործողությունների, թե ոչ:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ **Ա.Մնացականյան**